



Լեւոն Ե-ի սուրճ — L'épée de Léon V.

մը անոր նկարագրութիւնն ընելով Կահիրէի «Արշալոյս»-ին մէջ, (Դ տարի, թիւ 304,) հետեւեալը կ'ըսէ. «Հիացումը, յափշտակութիւնը տակաւ ալէտանջ խորհրդածութիւններու՝ արցունքի կը փոխանցուի, երբ, Աստղիկի արծառնին խնկարկութիւնը կատարած պահուղ, մերձակայ թանգարանի մը մէջ, առաջնորդ՝ Լեւոն Շալճեան, Փիլէի հայ արի մակուկաւարը, «Մեր Լեւոն թագաւորին սուրը տես» կը փափայ ականջդ ի վար: Անտէր, աւերակ Հայաստանի մէկ խորհրդանշանը՝ ազա՛տ Յունաստանի փառապանծ մուսէոնին մէջ, ո՛հ, սրտածմլիկ Էղեղութիւն հայուն համար . . . — Շատ սիրուն եւ շատ գեղեցիկ սուր մ'է այն: Եթէ չեմ սխալիր՝ 70-80 հարւր ընդամենը երկայնութիւն եւ 8-10 լայնութիւն ունի . . . Եթէ կարելի է հաւատ ընծայել ամէն «ըստի» ներու, կ'ըսուի թէ Անգլիացիի մը կողմէ նուիրուած է Յունաստանի, թէ այս սուրը նմանութիւն մըն է պարզապէս, եւ թէ իսկականը Լոնտոն կը գտնուի: Ոսկեայ կոթին վրայ քանդակուած է Նոյեան Տապանը, տակը՝ Ա.Յ. ոսկեգարգ պատեանի կողքերուն վրայ դրոշմուած կան անուններ՝ իրենց պատկերներով: Տիգրան, Արտաշէս, Աշխէն Տիկին, Վարդան, Ներսէս Կամսարական, Գայ Կահան: Արտէգ կարծես արբուն կը հոսի, երակներուդ մէջ մահու նման ցուրտ սարսուռ մը կ'անցնի՝ երբ, այդ ոլիմպական վայրի անճառահրաշ վեհութեան մէջ, նուազկոտ աչքերդ պիտի հանդիպին հետեւեալ ողբին. — Լաց ողբի | Հայկեան | Զաճիւն | Առիւծոյ | Մինչ նորո | Գեսցի ձեր | Ամբաս (°) | Արծուոյ: Ուրեմն այս կեղծ սրին մէկ օրինակն ալ, «Իսկականը», Լոնդոն կը գտնուի եղե՛ր . . .

Աւելի զարմանալին եւ մանաւանդ հիանալին է Վենետիկի Մխիթարեանց թանգարանին մէջ պահուած սուրը, որուն պատկերը կը գնեմ հոս, չնորհիւ ազնիւ բարեկամիս՝ Վեր. հ. Եսայի վ. Տայեցիի: Այս սուրը կարեւոր է անոր համար, որ բերուած է նոյն իսկ Կիլիկիայէ: Ահա թէ ի՞նչ կըսէ այս մասին հ. Ե. վ. Տայեցի, 1903 Վերաբ. 3-ին ինձ դրկած նամակով.

«Աւելորդ համարեցայ սուրին միւս կողմը լուսանկարել տալ, վրան միայն մէկ արձանագրութիւն ըլլալուն համար: Նկարուած կողմի արձանագրութեան ընթերցումն է հետեւեալն. նախ եռանկիւնաձեւին մէջ քանդակուած